



ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Մենք կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի առօրյայում, և ապահովել նրանց համապատասխան օժանդակությամբ:

Լեռնային Ղարաբաղը լեռնային տարածք է հարավային Կովկասում, որը բնակավայր է 150 000 քաղաքացիների: Այն միջազգայնորեն չճանաչված երկրներից մեկն է, որը ձևավորվել է Սովետական Միության փլուզումից հետո՝ 1991-ին, և Եվրոպայի ամենաանբարենպաստ տարածքներից մեկն է:

Այս փոքր տարածքի բնակիչները պաշարման մեջ են եղել ավելի քան 20 տարի: Ադրբեջանի հանրապետությունը, որը այս տարածքը համարում է իր իշխանությունը տակ գտնվող, փորձում է մեկուսացնել այն արտաքին աշխարհից: Սա զգալի դժվարությունների պատճառ է դարձել:

Այս տարածքը աշխարհի մաշտաբով մեկն է այն վայրերից, որն ունի ամենաբարձր ականային պայթյունների մակարդակը. Ամեն տարի քաղաքացիները՝ մասնավորապես երեխաներն ու հողագործները, զոհ են դառնում հակահետևակային ականների: Halo Trust-ը միակ միջազգային ՀԿ-ն է, որը գործ ունի այդ տարածքում, բայց նրան մերժում են ցանկացած միջազգային հասարակական ֆինանսավորում մնացած ականապատ տարածքները մաքրագերծելու համար:

Սահմանի հիմնական երկայնքով ճակատային գծերի առկայությամբ և Ադրբեջանի հետ մշտական ընդհարումներով պայմանավորված՝ անվտանգությունը տարածքի հիմնական խնդիրներից է: Սահմանի բախումների ժամանակ վայրագություններ են տեղի ունեցել, բայց չկան միջազգային դիտորդներ կամ ՀԿ-ներ, որպեսզի հետաքննություն անցկացնեն:



Նավթով հարուստ Ադրբեջանը ներդնում է զգալի ներուժ և ֆինանսական միջոցներ համոզելու օտարերկյա քաղաքական առաջնորդներին, պաշտոնյաներին, լրագրողներին և օգնություն տրամադրող կազմակերպություններին, որպեսզի հեռու մնան այդ փոքր տարածքից: **ԵՄ-ն դե ֆակտո միացել է Լեռնային Ղարաբաղի հանդեպ բռնկոտին:** Ոչ մի ԵՄ անդամ չի այցելել այնտեղ վերջին 20 տարիների ընթացքում և ոչ մի ԵՄ օգնություն չի ցուցաբերվում այնտեղի ժողովրդին: Երբ բախումներ են տեղի ունենում սահմանի ճակատային գծերում, կամ երբ վայրագություններ են կատարվում, ԵՄ-ն լռում է, կամ առաջարկում է լինել ներող և ցուցաբերել զսպվածություն:

Լեռնային Ղարաբաղի մեկուսացումը եզակի է: ԵՄ-ն աջակցում է բազմաթիվ երկրների բնակիչների՝ անկախ իրենց կարգավիճակից և տարածքի քաղաքական իրավիճակից: Մյուս չճանաչված տարածաշրջաններում, ինչպիսին է Աբխազիան, Տրանսնիստրիան և հյուսիսային Կիպրոսը, ԵՄ-ն իրականացնում է մի քաղաքականություն, որը կոչվում է «ներգրավվածություն առանց ճանաչման»՝ ապահովելով էական աջակցություն և միջազգային կոնտակտ: ԵՄ-ն էական օգնությամբ է ապահովում նաև շատ բռնապետություններին, ներառյալ նավթով հարուստ Ադրբեջանին. ինչ վերաբերում է Թուրքիային, որտեղ այժմ ավտորիտար ռեժիմ է, այն հանդիսանում է ԵՄ օժանդակության առաջին շահառուն ամբողջ աշխարհում տարեկան 3 միլիարդ եվրո օգնությամբ: Լեռնային Ղարաբաղը, ի տարբերություն Թուրքիայի, ունի զարգացող ժողովրդավարական համակարգ:

Մենք կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի առօրյայում և աջակցել այն պրոյեկտները, որոնք ուղղված են Ղարաբաղի բնակչության կենսապայմանները բարելավվուն, քանի որ Եվրամիության քաղաքականությունը պետք է նպաստի իր տարածքի բնակչության բարեկեցությանը և ոչ թե արհավիրքներին հենց իր իսկ տարածքում:



Մենք կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի առօրյայում, քանի որ նա պետք է ներկայություն ապահովի և նպաստի խաղաղությանը, երբ հակամարտությունները ուժգնանում են իր սահմաններին: